

3564

3565

3566

3567

3568

3569

Scallop Mappin & Webb

3(47.925)
2-24

2012


Ephyseum $\frac{1}{2}$ facie gr

ՊՈԼՈՃԵՆԻՔԻ ԾԱԳՈՒՄԸ

12

ՍԻՆՈՂԻ ԲԱՑՈՒՄԸ

1836-37



Բ. Ա. Գ. Ո. Ւ.
Տպարան „Ա. Ր Օ Ր“.
1896.



ՊՈԼՈՃԵՆԻՔԻ ԾԱԳՈՒՄԸ

Եւ

ՍԻՆՈԴԻ ԲԱՑՈՒՄԸ

1836—37

(Քաղուածք Աղ. Երիցեանի «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայր՝ աշխատութիւնից»):

Дозволено цензурою, 28 Сентября 1896 года, г. Тифлисъ.

115341-ԱՀ



34899

17 գար գոյութիւն ունեցող Հ. Եկեղեցին ղեկավարւել և ղեկավարւում է Ս. Աւետարանով, առաքեալների կանոններով, տիեզերական և մեր ազգային ժողովի սահմանադրութիւններով և աւանդական սովորութիւններով։ Դրանցով որոշում են ի թիւս այլոց կաթողիկոսի և արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, վանականների, քահանաների և առհասարակ կղերի և ժողովրդի իրաւունքները, պարտաւորութիւնները և փոխադարձ յարաբերութիւնները։ Հաւանական է ենթադրել, որ մեր հայրապետները՝ իրենց հօտի բարոյական կեանքի կառավարութեան համար կազմել են վարչութիւններ, սակայն այդ վարչական կանոնադրութիւնները մեզ չեն հասած և մեզ տակաւին անյալտ են մնում նախկին վարչութեան թէ կազմակերպութիւնը և թէ նրանց յարաբերութիւնների ձևերը։ Հաւանական է միայն կարծել, որ ժամանակ առ ժամանակ կայացած Հայոց ազգային եկեղեցական ժողովների արած որոշումները պիտի հիմնական և պարտա-

ւորեցուցիչ օրէնքներ լինէին յիշեալ վարչական կանոնադրութիւնների համար: Հայոց ազգային եկեղեցական ժողովները, որ գումարում էին հոգեւոր և աշխարհական ներկայացուցիչներից, կազմում են եղել այն բարձրագոյն ատեանը, որին պատկանում էր գերագոյն իշխանութիւն վճռական որոշումներ և օրէնքներ կայացնելու թէ՝ գուտ կրօնական խնդիրների վերաբերութեամբ և թէ՛ հոգեւոր վարչութեան մասին. այդ ժողովներն արտայատել են ազգի կամքը և վճիռը, որոնց առաջ հնագանդուել և հպատակուել են թէ՝ մեր մարմնաւոր իշխանութիւնը և թէ գահակալ հայրապետները: Միմիայն այդ ժողովներին էր պատկանում կաթողիկոսներին գահ բարձրացնելու, նրանց գործերը դատաստանի ենթարկելու, կամ նրանց գահընկէց անելու իրաւունքը և այդ որոշումների դէմ բողոքելու համար մի ուրիշ բարձրագոյն ատեան չէ ճանաչած Հայոց ազգը: Այդ ժողովները հաստատ և մնայուն մարմիններ չէին. վճռելով այն խնդիրները, որոնց համար գումարուած էին, ապա ամենքը ցրում էին իրանց ընակութեան տեղերը: Այսպիսի ժողովներ ունեցել են նաև օրթոգոքու, լատին և միւս գաւանութիւններին պատկանող քրիստոնեայ ազգութիւնները. բայց այդ ազգութիւնների մէջ հաստատութիւն են գտել նաև առանց աշխարհական ներկայացուցիչների և միմիայն եկեղեցականներից բարկացած ժողովներ, որ կոչուել են լուսական բառով սիւնիոդոս կամ սիւնոդ, որ կընշնակէ ժողով և գործ է ածւում միայն կրօնաւորների գումարման համար: Թէև այդ բառը մեզանում լայն գործածութիւն չփառ, այսուամենայնիւ մեր մէջ ևս կաթողիկոսը, թեմական առաջնորդները և վանահայրերը ունեցել են իրանց նախագահութեան ներքոյ խորհրդատու ժողովներ, որոնք թէև ժամանակ առժամանակ հրաւիրւում են եղել ատեան կազմելու և վարչական խնդիրներ լուծելու, բայց նրանց ձայնը իրանց գահական կալների հոմար միշտ եղել է որպէս խորհրդատու ձայն և չէ կոչուած սիւնհոգոս: Մեր կաթողիկոսական աթոռում, ըստ սովորութեան, ներկայ էին լինում 20—30, բայց ոչ պակաս քան 12, եպիսկոպոսներ, որոնց հետ կաթողիկոսը

ստէալ ստէալ խորհրդակցում էր վարչական կարգադրութիւններ անելիս: Աթոռում միշտ առնուազն 12—15 եպիսկոպոսներ գտնուելը կարևոր էր համարում նաև եկեղեցական մի քանի բարձրագոյն ծիսակատարութիւնների համար՝ որպիսին է եպիսկոպոսական ձեռնադրութիւնը, մեռոնօրհնէքը և կաթողիկոսական օծումն: Թեմակալ առաջնորդները, նշանաւոր վանքերի վանահայրերը՝ իրանց վիճակային գործերի համար նմանապէս խորհրդակցութեան էին հրաւիրում իրանց հաւատարիմ եկեղեցականներին և երբեմն նրանցից ատեաններ էին կազմում՝ ստորագրեալների մասին դատաստանական վճիռներ կայացնելու կամ երևացած անկարգութիւնների առաջն առնելու համար: Այսքան են մեր ունեցած տեղեկութիւնների հայոց եկեղեցու վարչական կազմակերպութեան մասին նախկին դարերում:

Դարուս սկզբում ծագած Դաւիթ-Դանիէլեան շփոթը՝ ցաւ պատճառելով ընդհանուր ազգին, ապացուցեց, որ կարևոր է աւելի մի հաստատուն և գրաւոր վարչական կանոնադրութիւն ունենալ, որ ընդմիշտ վերջ տար կամայականութիւններին և ապագայում առաջն առնէր սոյն տեսակ պատահելիք չարեց:

Լազարեան հռչակաւոր տոհմի ժառանգները, որոնք կշիռ և նշանակութիւն ունեին ոռւսական արքունեաց առաջ և սիրելի էին մայրաքաղաքների մեծամեծների աչքում, միշտ լսելի էին անում իրանց ձայնը հայոց վերաբերեալ խնդիրներում: Նրանք ջերմ և անկեղծ սիրում էին իրանց եկեղեցին և ազգը, նրանք բարոյապէս և նիւթապէս նախանձախնդիր էին հայոց յառաջադիմութեանը: Լազարեանները դեռ Սիմէոն և Ղուկաս կաթողիկոսների ժամանակներից Կայսերական Գուան առաջ հայոց հայրապետի վեհիլ էին ճանաչուած և սրանց օգնութեանն էին դիմում, ով որևէ ակնկալութիւն ունէր Թուսիոյ տէրութիւնից: Դաւիթ-Դանիէլեան կոիւների խայտառակ անցքերի լուրերը հասնում էին Լազարեան եղբարց ականջը: Այդ կոիւները, կամայականութիւնները՝ Լազարեանները վերաբերում էին էջմիածնում

կարգ ու կանոն չըլինելուն, որից օգուտ էին քաղում վանքի անզուսպ հոգեորականները: Նրանք գալիս էին այն համոզման, որ եթէ հայոց հոգեորականութիւնն ունենալ մի հաստատ վարչական կանոնագրութիւն, վերջ կ'արուի վանքում տիրող կամայականութիւններին: Միւս կողմից էլ, համեմատելով Հայոց հոգեոր բարձրագոյն վարչութեան անմիջիթար դրութիւնը ռուս եկեղեցու վարչական կազմակերպութեան հետ, որի Սինոդը կարողանում է խաղաղութեամբ կառավարել իր բազմաթիւ հօտը, Լազարեանները կարծում էին, որ անհրաժեշտ է Եջմիածնում ևս բարեմիտ եպիսկոպոսներից մի սինոդական կառավարութիւն հաստատել և այս մտքի իկատար ածելն առաջարկում էին Դանիէլ կաթողիկոսին: Մինաս Լազարեանը իր այս ցանկութեան մասին 1805 թ. գրեց Հաշտարխան Եփրեմին և Թիֆլիս Յովհաննէս գեղարդակրին՝ առաջարկելով սրանց, որ համոզեն Դանիէլին, որպէս զի սա Եջմիածնում մի սինոդոսարան հաստատէ և իւր նախագահութեամբ ու որոշ կանոններով կառավարէ եկեղեցու վարչական գործերը: Այդ ժամանակ Դանիէլն աքսոր էր ուղարկուած Մարազա, որտեղից իբրև պատասխան Լազարեանի առաջարկութեան, 1806 թուին մի ընդարձակ կոնդակ ուղարկեց Մարազալից, որի մէջ ցանկութիւն յայտնելով, «զի կենդանացին օրէնք և կանոնք առաքելոց և հայրապետաց սրբոց», գծում է այն սկզբունքները և կանոնները, որոնց հիման վրայ պիտի հաստատուի և առաջնորդուի խորհրդարանը: Այդ կոնդակի հետ մի առանձին գրութեամբ գիմում է նաև Հաշտարխանի առաջնորդ Եփրեմին, որին յանձնարարում է, խորհրդակցելով Մինաս Լազարեանի հետ, ներկայացնել իւր գիրը ի հաւանութիւն Ռուսիոյ տէրութեան և ապա հաստատել տալով, վաւերացրած օրինակն ուղարկել Եջմիածնի միաբանութեան ի գործադրութիւն: Եփրեմ արքեպիսկոպոսը 1806 թուին գեկտեմբերի 27-ին գիմում է կալսեր մի աղերսագրով՝ մատուցանելով Դանիէլի կոնդակի օրինակը և խնդրում է «յատուկ ուքազիւ» տալ իրաւունք, որով ինքը և Մինէ Լազրիչ Լազարեանը համաձայն Դանիէլ

կաթողիկոսի հրամաններին, կարողանան հրատարակել, կարգադրել և վերահստատել «զգլիաւորագոյն միաբանական ժողովն հոգեորական ընդհանուր հայոց եկեղեցական բարեկարգութեան կառավարութեան՝ ընդ ծալրագոյն իշխանութեամբ ընդհանրական պատրիարքին»: Եփրեմի խնդրագիրը թէկ ի նկատի առնուեցաւ, բայց քանի որ աթոռը Պարսից տէրութեան ներքոյ էր, տէրութիւնն անյարմար գտաւ խառնուել իւր սահմաններից դուրս եղած հայոց հոգեորականութեան ներքին վարչական գործերում: Սիւնհոգոսարան հաստատելու գործն այսպիսի անաջող դրութեան մէջ էր, երբ Դանիէլ կաթողիկոսն ազատուեց աքսորից և Նահից վերահստատուած՝ 1807 թ. մայիսին եկաւ Եջմիածին՝ անարգելք վարելու իւր կաթողիկոսութիւնը՝ գահընկէց Դաւթի փոխարէն: Կարճ միջոցում Եջմիածին հաւաքուեցան Դաւթի երեսից Թիֆլիս և այլ տեղեր փախած ու ցրուած հոգեորականները: Աթոռում մօտ 10 ամիս անդորրութիւն էր տիրում և այդ միջոցում սինօդի հաստատելու խնդիրը բոլորովին մոռացութեան էր տրուած. յանկարծ 1808 թ. ռուսները վերանորոգում են իրանց պատերազմը պարսից հետ: Այդ ժամանակ Դաւթիթը գեռ կենդանի էր: Դանիէլեան կուսակցութիւնը վախենում էր, որ Դաւթիթը օգուտ քաղելով երկրի շփոթ վիճակից, նորից կարող է ձեռք բերել կաթողիկոսական իշխանութիւնը և մեծամեծ տառապանքներ հասցնել Դանիէլեան կուսակցութեանը. ահա այդ պատճառով սիւնհոգոսարանի խնդիրը նորից երեան եկաւ և այս անգամ բոլորովին իրագործուեցաւ: Նտապելով օր առաջ սպասելիք չարիքի առաջն առնել, ցաւագար Դանիէլը, սովիսուած մի քանի միաբանների աղայանքից, 1808 թ. մայիսի 25-ին Եջմիածնի տաճարում, բոլոր միաբանութեան ներկայութեամբ հանդիսաւոր կերպով սահմանագրեց և վերահստատեց, ինչ որ մի անգամ 1806 թ. Մարազալից իւր հայրապետական կոնդակով աւանդել էր: Յանկանալով աւելի նշանակութիւն և վաւերականութիւն տալ իւր կազմած սինօդական վարչութեան, Դանիէլ կաթողիկոսը իւր իսկական ստորագրութեամբ

երդմնագիր տուեց ժողովին. երդուեցան նաև բարձրագոյն խորհրդարանի վեց նորահաստատ անդամները, էջմիածնի մնացած բոլոր միաբանները, որ իրանք՝ իբրև հայրենիքի ժառանգութեան հարազատ որդիք, կատարելապէս կը հպատակուին հոգեորականների ո. ժողովին, ջատագով կը լինին միշտ և հաստատ կը պահպանեն նրան ընդհանրական և օրինաւոր կաթողիկոսի վերատեսչութեան ներքոյ: Դանիէլ կաթողիկոսը մի քանի գրաւոր կանոններ տուաւ այդ ժողովի կառավարութեան համար: Այս կանոնները, որ վերաբերում են միմիայն Եջմիածնի մէջ նոր հաստատուած «բարձրագոյն խորհրդարան» անուանեալ ժողովի ներքին սարք ու կարգին (դիսցիպլինալին), չեն կարող իշարէ կոչուել հայոց եկեղեցւոյ ընդհանուր վարչական կանոնադրութիւն կամ սահմանադրութիւն: Դրանց հրատարակման նպատակն է՝ Դանիէլեան կուսակցութիւնից կազմած հոգեորականներին մի այնպիսի ոյժ տալ, որ նրանք կարողանան բարեկարգ ատեանի ձեռվ վճռներ կայացնել՝ Դաւիթ կաթողիկոսին գահակալութիւնից ընդ միշտ հեռու պահելու համար: 1808 թ., մարտին, Ներսէսը վերադարձաւ Եջմիածին և գտաւ Դանիէլին հիւանդ: Աթոռի գրութիւնը համոզում էր Ներսէսին, որ պէտք է վազօրօք առաջն առնել պատահելիք չարիքների. այս բանի համար նա երկու միջոցի էր դիմում. նախ՝ հաստատել Եջմիածնում բարձրագոյն խորհրդարանը և երկրորդ՝ քանի որ հիւանդոտ է Դանիէլը, խնդրել Ռուսիոյ Կայսրին, որ Եփրեմը հաստատուի յաջորդ և գայ Եջմիածին՝ այժմէն իսկ կաթողիկոս ձեռնադրվելու, որպէս զի գահն այլ ևս Դաւիթին չանցնէ: Ներսէսը կարողացաւ համոզել Դանիէլին՝ հաստատել բարձրագոյն խորհրդարանը, որի նշանակութիւնը բարձրացնելու մտքով նա սինոդ էր կոչում: Խորհրդարանի անդամ նշանակուեցան Դաւիթի անհաշտ հակառակորդները: Խորհրդարանի անդամներից ամենակրտսերը թէւ ինքը Ներսէսն էր, բայց սա շատ շուտով ձեռքը ձգեց ժողովի բոլոր ղեկավարութիւնը, իսկ զառամեալ Դանիէլը

միայն անունով մնաց կաթողիկոս: Մնում էր հիմա ստորագրել լիշեալ խորհրդարանի իշխանութեանը նաև Վրաստանի և Հաշտարխանի կոնսիստորները կամ հոգեոր կառավարութիւնները: Այս մտքով Ներսէսի դրդմամբ Դանիէլ կաթ, մի աղերսագրով դիմեց կայսրին, որի պատասխանը չստացած՝ մեռաւ (1808 թ. 9 Հոկտ.):

Բարձրագոյն խորհրդարանը Ռեթէոս Եպիսկոպոսին ուղարկեց Ռուսաստան Եփրեմ արքեպիսկոպոսին հրաւիրելու Եջմիածնական գահի վրայ բազմելու: Ի թիւս այլ և այլ յանձնարարութեանց Ռեթէոսը պատուէր ստացաւ Եփրեմի և Լազարեանի հետ միասին խնդրել թագաւոր կայսրից հաստատել մի քանի կէտեր ևս հոգեոր կառավարութեան համար. ինչպէս օրինակ.

1) Նորընտիր Եփրեմին շնորհել «ողորմութեան դրամատն»:

2) Հաստատել խորհրդարանը՝ ընդ վերատեսչութեամբ կաթողիկոսին ամենայն հայոց, խորհրդարանի կառավարութեան և կարգադրութեան ստորագրել «զկանցիստոր» և զհոգեորական կառավարութիւնս ամենայն հոգեորականաց Հայոց»:

3) Նորհել կնիք խորհրդարանին, որով կնքած գրութիւնները և օրհնութեան կոնդակները «առանց լուծման կնքոյ քանթօրին ընկալեալ նօմրէիւքն առաքեսցին գազոննի կարգաւ» և այլն:

Ռեթէոս Եպիսկոպոսի խնդրագիրը յանձնուեցաւ ի քննութիւն «ինոստրանի կալէկին». բայց «կալէկը» պատասխանեց, որ Հայոց Հոգեոր բարձրագոյն վարչութեան գործերում Ռուսիան իրաւունք չունի խառնուելու, քանի որ Արտատեան աթոռը իւր սահմանից գուրս է և թէ այդ Նորահաստատ կաթողիկոսի գործն է: Զնայելով այս անաջողութեանը, երբ Եփրեմը հաստ Եջմիածին, Ներսէսը կաթողիկոսի օծուելուց առաջ նորից հաստատել տուեց սինոգի կամ բարձրագոյն խորհրդարանի գոյութիւնը և թոյլ հայրապետից էլ երդումն ու ստորագրութիւն առաւ, որ առանց սինոգի համաձայնութեան ոչինչ չգործէ: Երդմնեցնելով Եփրեմ կաթո-

ղիկոսին, որ պարտաւորւում էր գործել սինոդի խորհրդով, Ներսէսը կարողացաւ ճանաչել տալ այդ սինոդոսական ժողովի գոյութիւնը նաև պարսից տէրութեանը, և Աբբաս Միրզայի հրովարտակի մէջ մտցնել տուեց և «զսուրբ ժողովն գործակից կաթողիկոսին»: Մնում էր համատարածել սինոդի իրաւասութիւնը Արարատեան աշխարհից դուրս գտնուած հայոց վրայ: Թէ և Ռուսիան հրաժարուեց խառնուել էջմիածնի խորհրդարանի հաստատութեան գործում, բայց Եփրեմի կաթողիկոսանալիս կայսրը բարեհաճեց վերահաստատել էջմիածնի այն իրաւասութիւնը Ռուսաստանի հայոց թեմի վրայ, որ շնորհուած էր Սիմէոն, Ղուկաս, Դանիէլ կաթողիկոսներին—այն է, որ Ռուսաստանի հայերը և իրանց առաջնորդը, ըստ հոգեորականին՝ հպատակվում են միմիայն էջմիածնի գահակալին: Կաթողիկոսի այդ իրաւասութիւնը կայսրը ճանաչած էր նաև Վրաստանի թեմի վերաբերութեամբ: Ռուսիոյ սահմաններում մնում էր միայն Աղուանից կամ Գանձասարի կաթողիկոսութիւնը, որ թէպէտ ընդունում էր էջմիածնայ գահակալի նախամեծարութիւնը, բայց վարչական գործերում ինքնագլուխ էր և նրան չէր ստորագրուում: Եփրեմի և իւր խորհրդատու Ներսէսի ջանքերով շուտով բոլորովին վերացաւ Աղուանից կաթողիկոսութիւնը, որ այնուհետեւ դարձաւ էջմիածնի ստորագրեալ թեմ: Մնում էր դարձեալ Սինոդի իրաւասութիւնը տարածել նաև Տաճկաստանի հայոց վրայ: Բայց այդ հեշտ չէր, մանաւանդ որ Եփրեմի ընտրութիւնը կատարուեց առանց պօլսեցոց մասնակցութեան և առանց Սուլթանի հաստատութեան: Բայց և այնպէս սինոդոսականներին թւում էր, որ եթէ պօլսեցիք կամենան, հեշտութեամբ կարող են ձեռք բերել Սուլթանի հրովարտակը, որի մէջ ճանաչուած լինի «սուրբ ժողովն գործակից կաթողիկոսի»: Այս մասին պօլսեցոց հաճութիւնը ձեռք բերելու ցանկութեամբ՝ բարձրագոյն խորհրդարանն առաջարկում էր, որ ի գիմաց Պօլսոյ հայոց՝ ներկայ լինի էջմիածնի սինոդում մի հոգեորական անդամ, որ նրա ձեռքով սինոդի ազգօգուտ խորհրդածութիւնները հաճոյական և պարտաւոր լինին Պօլսոյ

ազգային խորհրդարանի առաջը: Երևի Պօլսում արդէն լսել էին, որ Դանիէլի հաստատած և Եփրեմի վերահաստատած ժողովը կամ Սինոդը նպատակ ունի սահմանափակել կաթողիկոսի իրաւունքները և թէ խորհրդարանն իսկապէս անունով է միայն խորհրդարան, իսկ գործերը բացարձակ վարում է ըստ իւր կամաց և հաճոյից անդամներից ամենակրտսեր—Ներսէս Աշտարակցի եպիսկոպոսը: Այն ժամանակ Պօլսոյ Քոլեան Աբբասամ պատրիարքը, որ շատ էլ բարեկամ չէր Դանիէլեան կուսակցութեան իւր ամիրաներով հանդերձ, սինոդի հաստատութեան մէջ օտարի ազգեցութիւն էր տեսնում և այդ մի դաւադրութիւն էր համարում հայրապետական իրաւանց դէմ, ուստի և մերժեցին սինոդի գոյութիւնը: Մինչ այս պատասխանը կստացուէր, էջմիածնի Սինոդի մէջ արդէն անբաւականութիւններ էին ծագել գլխաւոր ղեկավար Ներսէսի դէմ, որից ստիպուած՝ Աշտարակցին բոլորովին հեռացաւ էջմիածնից և եկաւ Թիֆլիս առաջնորդ: Այնուհետև Սինոդը թէ և կար անունով, բայց թոյլ էր և անգօր, մանաւանդ, երբ աթոռն սկսեց ձնշուել պարտքերի տակ: Եփրեմն աշխատում էր վերականգնել Սինոդի ոյժը, բազմացնելով նրա անդամների թիւը: Բայց երբ 1822 թ. Եփրեմը հեռանալով աթոռից դէպի Շուշի և ապա Հաղպատ, տարաւ իւր հետ Սինոդի նշանաւոր անդամներից երեք եպիսկոպոս, այնուհետև էջմիածնի բարձրագոյն խորհրդարանը գրեթէ կորցրեց իւր նշանակութիւնը: Նոյն թուին յանուն կայսեր ուղարկած հրաժարականի հետ միասին ծերունի հայրապետը Ներսէսին նշանակեց իւր փոխանորդ և ծայրագոյն կառավարիչ հայոց հոգեորական գործերի, որին հլութեամբ պարտաւոր էր ստորագրուել էջմիածնի սինոդը: Մինչև Պարսից պատերազմի բացուելը, Ներսէսը միայնէն իշխանութեամբ կառավարում էր եկեղեցական գործերը Թիֆլիսից և այստեղից հրամաններ էր տալիս աթոռայնոց: Իսկ 1827 թ., երբ Ներսէսը ուուսաց զօրքի հետ հասաւ էջմիածնին, նա անմիջապէս վերականգնեց Սինոդը, անդամ նշանակելով իւր ցանկացած մարդկանց, որոնք հլու հպատակներ էին իրան

և ոչ թէ խորհրդակիցներ։ Պատրաստուելով ապա Բեսսարաբիա ուղերութելու, Ներսէսը 1828 թ. ամառը կրկին վերակազմեց սինոգական կառավարութիւնը, որին պատուիրեց շարունակ հաղորդել իրան, ուր որ լինի, իրանց բոլոր կարգադրութիւնները «ամենախոնարհ յայտարարութեամբ»։ Զնայած որ Ներսէսին վիճակուած էր ընդ միշտ Բեսսարաբիա մնալ՝ Սինոգը պարտք էր համարում շարունակել գեկուցանել նրան և հաշիւ տալ տեղական անցքերի մասին։

Այդպէս ահա Ներսէսը պէտք է համարուի Մինաս Լազարեանի մտքի մէջ ծագած էջմիածնում սինոգ հաստատելու գաղափարի առաջին իրագործել տուողը Դանիէլի օրով և վերահաստատել տուողը Եփրեմի կաթողիկոսութեան սկզբներում։ Բայց որքան նա ջանք էր անում ոյժ և զօրութիւն տալ այդ սինոգին, երբ դա կարեոր էր Դաւթի դէմ մաքառելու համար և երբ ինքն էլ անդամ էր այդ կառավարութեան, նոյնքան էլ ստորացրեց դրա նշանակութիւնը և ինքը բունացաւ վրան, երբ Դաւթիթը վախճանուեցաւ և այլ ևս վտանգ չկար կաթողիկոսական իշխանութեան յափշտակելու մասին։ Իսկ եթէ նախ քան Բեսսարաբիա գնալը նա կրկին վերակազմեց Սինոգը, այդ էլ այն մտքով էր, որ չլինի թէ իւր բացակայութեան ժամանակ Կարբեցին կամ այլ ոք յափշտակէ հիւանդոտ և զառամեալ Եփրեմի իշխանութիւնը։ Հետևաբար, էջմիածնի սինոգը Ներսէսի աչքում մի ժամանակաւոր հիմնարկութիւն էր, որ կարեոր էր միայն վտանգի առաջն առնելու համար և որի գոյութեան մէջ խաղաղ միջոցներին նա ամենակին պէտք չէր զգում։ Այսպէս էր նայում Ներսէսը սինոգի վրայ նաև իւր կաթողիկոսութեան ժամանակ։

Պարսկական և Տաճկական պատերազմները վերջանալուց յետոյ, կոմս Պասկեիչի հոգածութեան առարկան դարձաւ նոր նուաճած երկրների բարեկարգութիւնը. ի թիւս այլ և այլ խնդիրների, գլխաւոր տեղն էր բունում Հայոց եկեղեցա-

կան վարչութեան կազմակերպութիւնը։ Էջմիածինը մի առանձին բարոյական և նոյն իսկ քաղաքական նշանակութիւն ունէր Ուստիոյ տէրութեան աչքում։ Բայց հայոց հոգեոր վարչութեան այդ կենդրոնը այսօր անցնում էր Ուստիոյ ձեռքը մի ամենաանմիջաբար դրութեան մէջ։ Զգտելով բարձր պահել էջմիածնի նշանակութիւնը ընդհանուր հայագի աչքում, Պասկեիչը կարեոր էր համարում արժանավայել դիրք տալ աթոռին և այնպէս բարեկարգել հայոց եկեղեցու վարչութիւնը, որ դա ապատ մնայ որևէ կամայականութիւնից և շահագիտական ձգտումներից։ Այս կէտի վրայ առանձին ուշագրութիւն դարձնելով, կոմսը հէնց սկզբից տեսաւ, որ լիշեալ վարչութիւնը չունի ոչ մի հաստատ կարգ ու կանոն։ Կոմսը համոզուեցաւ, որ Ներսէսը իւր ձեռքի մէջ էր պահում թէ կաթողիկոսի կամքը, թէ Սինհողոսը և թէ Կովկասի հայոց եկեղեցական վարչութիւնը և աշխատում էր շարունակել իւր այդ իշխանութիւնը նոյն իսկ Բեսսարաբիա քաշուած միջոցին։ Հետևաբար կոմսը կարեոր էր համարում վերջ տալ Ներսէսի այդ իշխանութեան և լիշեալ վարչութեան համար մի այնպիսի կանոնադրութիւն կազմել, որի մէջ ճշտութեամբ որոշուած լինին ամենքի իրաւունքները և պարտաւորութիւնները, սկսած կաթողիկոսից և սինողից մինչև յետին եկեղեցական պաշտօնեան։

Դեռ 1828 թ. (նոյեմբերին) նկարագրելով հայոց եկեղեցւոյ այն ժամանակուայ դրութիւնը, Պասկեիչը գրում էր նախարարին, որ թոյլ Եփրեմը ինքն անկարող լինելով պարապել ծալրագոյն վարչութեամբ, դրա բոլոր դեկավարութիւնը յանձնել է փառասէր Ներսէսին, իսկ սա՝ իւր արբանեակներին։ «Ծալրագոյն սինոգը և էջմիածնի միաբանութիւնը», գրում էր կոմսը, «զրկուած լինելով իրաւունքից և թիւնը», գրում էր կոմսը, «զրկուած լինելով իրաւունքից և իրենց տրուած իշխանութիւնից, մի կերպ տարակուսութեան մէջ են, թէ բնչպէս գործեն, որովհետև նկարակիցների ձեռքով միաբանութեան մէջ տարածուող խառնակութիւնները հետզհետէ աճում են և այդպիսով քայլքայւում է հոգեորականութիւնը։ Եկեղեցական ստորին պաշտօնեալը

առհասարակ ընկղմուած են խորին տգիտութեան մէջ և նրանց թիւն այնքան բազմացել է, որ ծանրաբեռնում է ժողովրդին։ Հայոց ազգը, տեսնելով այդ անկարգութիւնները, կորցնում է իւր յարգանքը դէպի հոգեորականութիւնը և առհասարակ նկատում է մի առանձին անբաւականութիւն հայոց եկեղեցու մէջ տիրած այժմեան անկարգութիւնների և խառնակութիւնների պատճառով։ Հայոց հոգեոր վարչութեան գործերն այսպիսի գրութեան մէջ մնալ այլ ևս անկարող են և հարկ է կտրուկ միջոցներով առաջն առնել այս մասին տեղի ունեցող ապագայ չարիքների»։ Այդ պատճառով Պասկեիչն գրում է՝ «կարեոր է վերականգնել և հաստատել սինոդի իրաւունքներն ու սահմանել կանոններ, որոնց հիման վրայ պիտի վճռուին հայոց եկեղեցու նշանաւոր գործերը. սահմանել մի ընդհանուր կանոնադրութիւն եկեղեցական գումարների օրինաւոր գործածութեան և հաշուապահութեան մասին. հայոց հոգեորականութեան լաւագոյն կրթութիւն տալու համար հաստատել գպրոցներ և ուսումնարաններ, չափաւորել վիճակների և քահանաների թիւը, միջոց տալ եկեղեցական պաշտօնեաներին առհասարակ առանց չքաւորութեան ապրելու, որպէս զի նրանք չծանրանան ժողովրդի վրայ և չ'ստորացնեն իրանց հոգեոր աստիճանը անվայել ժողովարարութեամբ. վերջապէս այժմէն իսկ ձեռնամուխ լինել հայոց եկեղեցու գլխաւոր վարչութեան համար ընդհանուր և դրական սահմանադրութիւն կազմելու, որի մէջ ճշտութեամբ պիտի որոշուած լինին, թէ ինչ բանի մէջ ճշտութեամբ պիտի կայանան իրաւունքները պատրիարքի, սինոդի և վիճակաւոր եպիսկոպոսների և սահման դրուի ամենքի իշխանութեանը կամ իրաւունքներին։ Ամենեին չպէտք է այլ ևս ժամանակ կորցնել այդ մասին մի ընդհանուր կանոնադրութիւն կազմելու համար, որովհետեւ Եփրեմը իւր թոյլ բնութեամբ ոչինչ ընդդիմութիւն չի ցոյց տալ այս մասին մտցնելիք բարելաւութեանց և հարկ եղած կարգ ու կանոններին։» Ըստ սմին Պասկեիչը խնդրում էր նախարարից, որ տեղեկացներան, թէ որպիսի կարգ ու կանոններով են կառավարում

Հաշտարխանի և Բեսսարաբիայի Հայոց թեմերը, այլ և խնդրում էր՝ նախարարութեան գիւանատան մէջ գտնուած գործերից կազմել և ուղարկել իրան մի նախագիծ երկրիս մէջ էլ հոգեոր վարչութիւն հաստատելու համար։ 1829 թ., մարտի 15-ին, նախարար Բլուդովը հաղորդեց Պասկեիչին, թէ՝ «Թագաւոր Կայսրն առանձին ուշադրութեամբ քննելով Հայոց եկեղեցու բարեկարգութեան վերաբերեալ բոլոր թղթերը, բարեհաճեց հաստատել հետեւեալ եղակացութիւնները։ 1) Երբէք չպէտք է թոյլ տալ, որ կաթողիկոսն իրաւունք ունենալ ինքն իրան յաջորդ նշանակելու, այլ ընդհակառակը, հարկ է աշխատել վերականգնելու պատրիարքական ընտրութեան այն կարգը, որ համապատասխան է Հայոց եկեղեցու նախկին կանոններին և սովորութիւններին, միայն թէ յարմարացնելով այդ բոլորը Հայաստանի ներկայ գրութեան հետ։ 2) Բազմաթիւ երևելի պոլիտիքական պատճառներով կարեոր է, որ Հայոց պատրիարքը սիրելի և յարգելի լինի ոչ միայն ուսւահպատակներին, այլ և միւս հայերին. այնպիսի մի անձնաւորութիւն, որ կարողանար համոզել տաճկահայերին միանալ էջմիածնի աթոռի հետ։ Այդպիսի գեր խաղալու համար ներսէսն անվտահելի է։ 3) Ներսէսին պահել ինսուարաբիայում, իսկ Եփրեմ կաթողիկոսին յորդորել, որ աւելի ժիր կերպով զբաղուի եկեղեցական վարչութեան գործերով։ 4) Պատրաստելով Հայոց Լուսաւորչական եկեղեցու կանոնադրութեան մի նախագիծ՝ կարելոյն չափ պահպանելով նրա բոլոր նախկին օրէնքներն ու ծէսերը, որ անշուշտ շատ թանգ են ազգի համար, կարեոր են մանրամասն և ամենաճիշտ տեղեկութիւններ այդ եկեղեցու թէ՝ նախկին և թէ՝ ներկայ գրութեան մասին, որ ամենից յարմար է ժողովել նոյն իսկ «Հայոց աշխարհում»։ Մինչեւ անդամ այն սակաւաթիւ տեղեկութիւնները, որ ժողովուած են այստեղ մասամբ արտաքին գործոց նախարարութեան գիւանատնից, մասամբ Հայաստանին վերաբերեալ զանազան շարադրութիւններից, պէտք է վերաստուգուին և լրացուին։ Այդ նպատակով ուղարկելով ընդ սմին վերոլիշեալ տեղեկութիւններից կազ-

մած մի պատմական տեսութիւն Եջմիածնի պատրիարքների ընտրութեան կարգերի մասին, ձեզ է մնում նկարագրել, թէ Եջմիածնի սինոդը և կամ առհասարակ Հայոց հոգեորականութիւնը այժմ ինչ կարգերի է հետևում կաթողիկոսական ընտրութեան գործում և կամ առաջ ինչ ձեռվ է գործել: Հարկ է նմանապէս նշանակել, թէ այդ կանոններից ո՞րն է աւելի յարգելի ժողովրդի աչքում և որը, համապատասխանելով Հայոց աշխարհի ներկայ կացութեան պայմաններին և մեր պարագայի նախակներին, պէտք է ըստ ձեր կարծեաց, մտցնուի Լուսաւորչական եկեղեցու համար նախագծուող կանոնադրութեան մէջ»: Նախարար Բլուդովն ընդ սմին ուղարկում է Պասկեիչին ա) վերոիշեալ պատհական տեսութիւնը Հայոց պատրիարքարանի ընտրութեան կարգ ու կանոնների մասին և բ) մի քանի ուրիշ տեղեկութիւններ ու մի ցուցակ Հարցերի՝ Հայոց եկեղեցու վարչութեան մասին, խնդրելով Պասկեիչին, որ հայ եկեղեցու վարչութեան կանոնադրութիւնը կազմելու համար նիւթեր ժողովելիս ըբաւականանալ իւր թղթի մէջ նշանակուածներով: Նախարար Բլուդովը Պասկեիչին ուղարկած պատմական գրուածները, որոնց հիման վրայ պիտի պօլօժենիէն հիմնուէր, ցոյց են տալիս, թէ այն ժամանակ, որքան թիւր և սիսալ էին Ռուսիոյ տէրութեան ունեցած տեղեկութիւնները Հայոց եկեղեցու էութեան, հոգւոյ և վարչական օրէնսդրութեան մասին: Ինքը Բլուդով նախարարը խոստովանում էր, որ այդ ժողոված տեղեկութիւնները թէ՛ վերաստուգութեան են կարօտ և թէ թերի են: Կալսեր բարձրագոյն կամքն էր հայ եկեղեցու վարչութեան համար մի այնպիսի սահմանադրութիւն լորինել և դրական օրէնք ստեղծել, որ բարեկարգելով լիշեալ վարչութիւնը, վերջ տար կամայականութիւններին: Այդ կանոնադրութեան մէջ պէտք է պահպանուած լինին կարելոյն չափ հայ եկեղեցու հին օրէնքները, ծէսերը և աւանդութիւնները, այդ բոլորը պէտք է համաձայնեցնել նաև ներկայ պահմանների և տէրութեան հիմնական օրէնքների հետ ու միանդամայն մի հաճելի կանոնադրութիւն լինի ամեն տեղի,

նամանաւանդ Տաճկաստանի Հայոց համար: Ուստի հարկաւոր էր ուսումնասիրել Հայոց եկեղեցու հոգին և կազմակերպութիւնը հայկական հարազատ աղբիւրներից: Նախարար Բլուդովին թւում էր, թէ միայն կոմս Պասկեիչը կարող է ժողովել ամենաճիշտ և հարազատ տեղեկութիւնները, ըստ որում նրա իրաւասութեան տակ էին հայաբնակ գաւառները և աթոռը: Սակայն Պասկեիչն էլ դրա համար պատրաստված մարդիկ չունէր: Բայց քանի որ ինքն էր յուղել Հայոց եկեղեցու բարեկարգութեան խնդիրը և քանի որ այդ խնդիրը ծագեցաւ կոմսի և ներսէսի անձնական թշնամութեան պատճառով, որ տակաւին շարունակուում էր, հարկ էր մի կերպ բաւականութիւն տալ նախարարի պահմաններին: Պասկեիչը դիմեց Սերովիէ վարդապետի օգնութեանը և կաթոլիկութիւնից գարձած այդ վարդապետը՝ իրան անզօր համարելով այդպիսի գործին ձեռնամուխ լինելու համար, ներկայացրեց կոմսին ներսիւան ուսումնարանի աւագ դաստու պլոֆեսոր Յակոբ Շահան Ջրպետեանին, որ թէ կաթոլիկութիւնից գեռ չէր գարձած, բայց միակ ուսումնական հայն էր երկրիս մէջ և իւր նախապաշարմունքներով ու կրքերով հանդերձ, կարող էր ծառալել այդ գործին: Ջրպետը Պասկեիչի համար մի գիւտ էր և նրա գիտնական աշխարհում ունեցած հայագիտութեան հեղինակութիւնն ու հոչակը առհաւատչեալ էր, որ գործը իբր թէ զերծ պիտի լինի պատմական սիսալներից: 1822 թ. ապրիլին կոմսը յանձնեց Ջրպետին նախարարութիւնից ստացած այս առարկալի վերաբերեալ թղթերը և պատուիրեց, որ խիստ գաղտնի պահէլով իրան տուած յանձնարարութիւնը, պատրաստէ նախարարի խնդրած պատմական տեղեկութիւնները: Նարունակելով կրել ներսէսի ուսումնարանում ուսուցչի պաշտօնը և ստանալով ուժիկը, Ջրպետը նոյն ուսումնարանի վերնայարկում, ուր էր իւր բնակարանը, վեց ամիս շարունակ փակուած պարապելով և ոչ մի անգամ դաստիան չիջնելով, պատրաստեց Փրանսերէն լեզուով մի աշխատութիւն, որ բաղկացած էր վեց տետրակից կամ 305 երեսից գրուած

թերթից: Այդ տետրակները բովանդակում էին իրանց մէջ նախարար Բլուդովի առաջարկած 85 հարցմունքի պատասխանները, պատմական ցուցակ Հայոց եկեղեցական տզգային ժողովների և վերջապէս սկզբնական նախագիծ «կանոնադրութեան յաղագս կառավարութեան Հայոց եկեղեցւոյ»: Այդպէս ահա Զրպետի ձեռով պատրաստուեցաւ սկզբնական նախագաղափարը այն կանոնադրութեան, որ ապա զանազան փոփոխութիւններ կրելուց յետոյ հաստատուեցաւ Պօլօծէնիէ անունով: Յիշեալ աշխատութիւնը 1829 թ. հոկտ. Զրպետը ներկալացրեց կոմս Պասկեիչին: Որպէս զի այդ աշխատութիւնն աւելի հեղինակութիւն ստանալ, կոմսը հարկ համարեց մի գաղտնի կոմիտետ կազմել իրան յայտնի եղած հաւատարիմ անձինքներից, որոնք միասին խորհրդակցելով և քննելով Զրպետի նախագիծը, պիտի պատրաստէին և ներկալացնէին իրան Հայոց եկեղեցւոյ կառավարութեան սահմանադրութիւնը: Պասկեիչը գաղտնի կոմիտետի անդամ նշանակեց գեներալ մայօր իշխ. Բէհբուդովին, Հայոց վարդապետ Սեռովելին, Հայոց գրականութեան պրօֆեսոր Սերբիդին և կոլեժականութեան պատրունի Սեռովելին: Այս մասին հաղորդելով Բլուդովին, Պասկեիչը 1829 թ. շարունակում էր. «Հոգեոր կողմից կարելի էր անդամ նշանակել նմանապէս Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսին, որ մօտերումս ժամանեց այստեղ Էջմիածնից, բայց ես այդ չարի, որպէս զի տեղիք չտամ կարծելու, թէ տէրութիւնը կամենում է խառնուել Հայոց եկեղեցու գործերում առանց պատրիարքի գիտութեան: Այնուամենայնիւ կարելի է դիմել Յովհաննէս արքեպիսկոպոսին մասնաւոր կերպով, երբ հարկ լինի որևէ առարկալի վերաբերութեամբ նրա կարծիքն իմանալու»: Թէ որքան անպատճառ էին այդպիսի մի նշանաւոր օրէնսդրութիւն կազմելու համար լիշեալ գաղտնի կոմիտետի անդամները, երեսում է նրանից, որ լիշխան Բէհբուդովը, ինքը հայ լինելով, թէւ Պասկեիչի կարծիքով, իբր թէ անշուշտ պիտի գիտենալ և հայ եկեղեցու հոգին ու պատմութիւնը, լիշխանը զուրկ էր բոլորովին հայագիտութիւնից. նա ոչ հայոց գիրը

գիտէր, ոչ պատմութիւնը, ոչ եկեղեցական օրէնքներն ու ծէսերը: Սերովել վարդապետը Հոռմում կրթուած և այժմ կաթոլիկութիւնից դարձած, չէր ուսած հայոց մօտ և նրա ունեցած տեղեկութիւնները հայոց եկեղեցական օրինաց և հնաւանդ ծէսերի վերաբերութեամբ, բնականապէս պիտի լինէին այնքան, որքան հաղորդած էին նրան Հոռմում հակահայկան աղբէւրները: Զրպետեանն էլ հայ կաթոլիկ էր և մինչև անգամ չէր վերադարձած մայրենի եկեղեցւոյ ծոցը: Իսկ աստիճանաւոր Օչկինը, ազգով լեհացի և կրօնքով կաթոլիկ, ոչ հայոց լեզուն գիտէր, ոչ պատմութիւնը: Մի բանում միայն աջող էր այդ ընտրութիւնը, այն է, որ կոմիտետի բոլոր անդամները և նրանց հետ Յովհաննէս Կարբեցին անհաշտ թշնամի էին ներսէս Աշտարակցուն: Գաղտնի կոմիտետը բացուեց 1830 թ. յունուարի 8-ին Պասկեիչի հրամանագրով: Համաձայն Պասկեիչի հրամանին Գ. Կ. այնքան ծածուկ էր պահում իր գոյութիւնը, որ ոչ ոք չգիտէր նրա լինելը, ոչ Եփրեմ կաթողիկոսը, ոչ Էջմիածնեցիք, ոչ Ներսէսը և ոչ նրա թիֆլիսեցի բարեկամները: Կոմիտետի գոյութիւնը գիտէր միայն Կարբեցի Յովհաննէս արքեպիսկոպոսը, որ այդ միջոցում թիֆլիսում գտնուելով, մի երկու անգամ հրաւիրուեցան Բէհբուդեանի հետ խորհրդակցելու էական մասերի վերաբերութեամբ: Կոմիտետը մեծ եռանդով էր տանում գործը. երկու ամսուան մէջ վերջացնելով իւր աշխատութիւնը, 1830 թ. մարտի 11-ին ներկալացրեց կոմս Պասկեիչին 119 յօդ. բաղկացած սահմանագրութիւնը: Կոմիտետի նախագիծը, պատրաստած լինելով օրէնսգիտութեան անհմուտ մարդկանց ձեռքով, միանգամայն զուրկ էր դրական օրէնքի յատկութիւններից: Դա ոչ միայն թերի էր և անկատար, այլ և իր էական մասերում չէր համապատասխանում ոչ մեր եկեղեցու վարչական հոգւոյն և ոչ իսկ բարձրագոյն լիշխանութեան ցանկութեան և ձգտումներին: Կոմս Պասկեիչի և նրա կաղմած գաղտնի կոմիտետի սխալն այն բանի մէջ էր կայանում, որ նրանք լիշեալ կանոնագրութիւնը ծրագրելիս՝ սաստիկ նախագիտարուած էին Աշտարակցի ներսէս արքեպիսկոպոսի

դէմ և ամեն մի յօդուած յօրինելիս միշտ աչքի առաջ ունէին Քիշինե հեռացած ներսէսին: Կոմիտետն աշխատում էր մի այնպիսի կանոնադրութիւն յօրինել, որ իդէպ, եթէ Պասկևիչը ջանքերին հակառակ ներսէսին յաջողուի էլ կաթողիկոսանալ, առաջուց սահման լինի գրուած նրա փառասիրական միահեծան իշխանութեանը և նրա ամեն մի քայլը կախումն ունենայ Եջմիածնի ծալրագոյն խորհուրդից (սինոդից): Կոմսն աւելի լաւ էր համարում կենդրոնացնել իշխանութիւնը լիշեալ խորհրդի ձեռքում, որին դիւրութեամբ կարելի կլինէր ծառայացնել իր կամքին: Գաղտնի կոմիտետի անդամները ի մօտոյ ծանօթ լինելով կոմսի այդ տրամադրութեանը և ինքեանք ևս ոչ պակաս գրգռուած լինելով ներսէսի դէմ թէ վրէժինդրութեամբ և թէ մանաւանդ կոմսին Հաճոյանալու ցանկութեամբ, իրանց ջանասիրութեան մէջ մի քայլ էլ առաջ գնացին: Պետերբուրգում բարեբաղդաբար հաւանութիւն չ'գտաւ Պասկևիչի ներկայացրած նախագիծը և ներքին գործոց նախարարութիւնը ստիպուած էր նոր ի նորոյ սկսել գործը: Թագաւոր կայսրը բարեհաճեցաւ հրամայել՝ կազմել Պետերբուրգում մի առանձին կոմիտետ, որ մասնակցութեամբ ներքին և արտաքին գործոց նախարարների և այլ պետական անձանց պատրաստէ հայոց եկեղեցու կառավարութեան համար մի նոր կանոնադրութիւնը: Այս կոմիտետը պիտի քննէր ի թիւս այլոց նաև Պասկևիչի նախագիծը և իր որոշումների օրագիրները հետք հետէ և մաս առ մաս մատուցանէր կայսեր ի հաստատութիւն: Պետերբուրգում բարձրագոյն հաստատուած կոմիտետը այնպէս թեթև չվերաբերուեց գործին, ինչպէս Թիֆլիսի գաղտնի կոմիտետը: Պետական բարձրագոյն հաստատութեան վայել աշալը ութեամբ՝ ձեռնամուխ եղաւ հայոց եկեղեցու կառավարութեան համար մի դրական օրէնք ծրագրելուն, որ այնքան էլ հեշտ չէր: Կանոնադրութիւն ծրագրելու խնդիրը տէրութեան աչքում մեծ նշանակութիւն էր ստանում և քաղաքական քնքոյշ առարկաներից մէկն էր համարւում, որ կարօտ էր բազմակողմանի և զգոյշ քննութեան:

Այդ կոմիտետի պարապմունքները տևեցին մի քանի տարի, որովհետև սխալներից զգուշանալու մաքով այս և այն խնդիրների վերաբերութեամբ կանխապէս հաստատ տեղեկութիւններ էին ժողովում: Այդ տեղեկութիւնները նախարարութեան խնդրանօք մասամբ ժողովում էր Կովկասի կառավարչապետ բարօն Ռօգէնը: Մինչդեռ խմբագրուում էր պօջօծելի Յովհաննէս կաթողիկոսը ստիպուած Եջմիածնեցոց բողոքներից, 1834 թ. սկզբին դիմեց բարօն Ռօգէնին, որ նա միջնորդէ կայսեր առաջ, որպէս զի Եջմիածնում արքունական ատեանների ձեռվ մի սինոդ հաստատուի և սրան միջոց տրուի գործերն օրինաւոր վարելու համար: 1835 թ., գարնանը, բարօնը գնաց Պետերբուրգ պաշտօնական գործերով, ուր ի թիւս այլոց, մի երկու անգամ ներկայ եղաւ պօջօծելի ծրագրող կոմիտետի նիստերին և բերանացի բացատրութիւններ տալով յալտնեց նմանապէս կաթողիկոսի ցանկութիւնը սինոդ հաստատելու մասին: Պօջօծենիէ կազմող Պետերբուրգի կոմիտետը, ինչպէս ասացինք, շատ զգուշութեամբ էր առաջ տանում գործը: Զըբաւականանալով բարօն Ռօգէնի հետ մայրագաղաքում անձամբ խորհրդակցելով, կոմիտետը բարօնի Կովկաս վերադարձած ժամանակ ուղարկեց նրան իր ծրագրած կանոնադրութիւնը, որպէս զի կրկին քննութեան ենթարկուի և քանի մի կարևոր խնդիրների վերաբերութեամբ էլ կանխապէս իմացուին Յովհաննէս կաթողիկոսի կարծիքները: Բարօնը պէտք է վերջնականապէս վերաբննէր պօջօծենիէ նորակազմ ծրագիրը և ներկայացնէր Պետերբուրգ՝ բարձրագոյն հաստատութեան: Այս գործի համար բարօնին կարևոր էր ինչ կէտերի վերաբերութեամբ խորհրդակցել թէ՝ Երևանի նահանգապետ իշխ. Բէհըուղեանի և թէ՝ կաթողիկոսի հետ, վասնորոյ Երկուսին էլ պաշտօնական հրաւերներ ուղարկուեցան շտապել գալ Թիֆլիս: Կաթողիկոսը 1835 թ. Հոկտեմբերին ճանապարհ ընկաւ Եջմիածնից և մեծ հանդսով մուտք գործեց Վրաստանի մայրաքաղաքը: Յովհաննէս կաթողիկոսի Թիֆլիսում ամիսներով մնալը և բարօն Ռօգէնից գտած սիրալիր ընդունելութիւնը ապարդիւն չանցան:

Այդ միջոցում գլուխ եկաւ պօլօժենիկի ծրագրի հաստատութիւնը, որը 1836 թ. յունվարին արդէն ուղարկուած էր Պետերբուրգ, ուր վերջնականապէս կրկին ենթարկուելով նախարարների քննութեան, նոյն 1836 թ. մարտի 11-ին մատուցուեցաւ Թագաւոր Կայսեր ի հաստատութիւն։ Այս առիթով Նիկողայոս Կայսրը բարեհաճեց շնորհել կառավարիչ սենաթին հետևեալ հրովարտակով.

«Յորմիհետէ Հայաստանեայց եկեղեցւոյ ծայրագոյն պատրիարքի եւ ամենայն Հայոց կարողիկոսի արոռանիս եղած Եջմիածինը մեր զօրաց ձեռփովը զրաւեցինք եւ Հայոց աշխարհի հետ միասեղ մեր կայսրութեան մասը դարձրինք, հարկ համարեցինք այն եկեղեցւոյ զործոց եւ պաշտօնէից կառավարութիւնը հաստատուն եւ բացայց սկզբանց վրայ դնել։ Սորա համար հրամայեցինք, որ բուն իսկ նոյն եղջը ամբողջ Սահմանադրութեան մի նախագիծ պատրաստոի Հայաստանեայց եկեղեցւոյ զործերի կառավարութեան համար եւ այն սահմանեերուն հիմն յինին նոյն եկեղեցւոյն սեպհական վաղեմի կարգադրութիւնները, եւ համաձայնին մեր կայսրութեան ընդհանուր օրենսուութեանց հետ։

Նախագիծը պատրաստուելուց յետոյ՝ Մեր հրամանովն որոշուած մի յանձնաւարական ժողովի բնուութեան տակ ձգուեցաւ, յետոյ նորից Եջմիածին ուղարկուեցաւ, որպէս զի նայուի, թէ պաշշաճ ու ամբողջ է արդեօֆ եւ միանգամայն նորա բանի մի յօդուածների վերաբերութեամբ կարողիկոս Հայրապետի հետ խորհրդակցուի։

Իսկ այժմ նոյն Սահմանադրութիւնը կայսերական խորհրդարանի մէջ նորից բնուուած յինելով, հաստատում էին այն եւ՝ հրովարտակին հետ միասեղ կառավարիչ Մենարին ուղարկուելով, հրամայում ենի, որ հարկ եղած կարգադրութիւնները կառավարութեամբ կատարուին։

Բնագրի մէջ Վեհափառ Կայսեր ձեռքով գրուած է՝

«Ղուս այս եղիցի»

Ն Ի Կ Ո Լ Ա Յ

Այս սահմանադրութիւնը, որ առհասարակ յայտնի է «պօլօժենիկ» անունով, նոյն 1836 թ., ապրիլ ամսին, բարօն Ռոգէնը յանձնեց Թիֆլիսում Յովհաննէս կաթողիկոսին ի գործադրութիւն։ Կաթողիկոսն անմիջապէս թարգմանել տուեց իւր ատենադպիր և թարգման Մկրտիչ Քարտաշեանին ու այդ թարգմանութիւնը ուղարկուեցաւ Եջմիածին տպագրելու առանձին տետրակով հետևեալ վերտառութեամբ։ Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց Լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան։ Յիշեալ կանոնադրութիւնը բաժանուած է տասն գլուխ, 141 յօդուածից բաղկացած։ Այստեղ լիշենք, որ Աղէքսանդր Նևացու առաջին աստիճանի շքանշանը շնորհուեցաւ Յովհաննէս Կարբեցուն միայն պօլօժենիկն հաստատուելուց յետոյ, որպէս վարձատրութիւն իւր այս գործում կրած աշխատութեան։ 1836 թուի հոկտեմբերի 1-ին Յովհաննէս Կարբեցին Թիֆլիսից վերադարձաւ Եջմիածին պօլօժենիկն գործ դնելու համար։ Այստեղ աթոռում արդէն կառուցանում էր սիւնհոգոսարանի և գրա գիւտանատան շինութիւնը սիւնազարդ գաւելթով, որ բարձրանում էր վեհարանի հանդէպ։ Յետաձգելով սինոդի հանդիսաւոր բացումը մինչև լիշեալ շինութեան վերջանալը, այնուամենայնիւ ամեն կերպ պատրաստութիւններ էին տեսնուում, որ պօլօժենիկն գործ գրուի եկող 1837 թուի յունուարի 1-ից բարձրագոյն հաստատութեամբ։ Թէ տէրութեան և թէ կաթողիկոսի ցանկութիւնն էր, որ սինոդի բացումն շատ հանդիսաւոր կատարուի։ Հանդիսի համար նշանակուած էր 1837 թ. փետրվարի 28-ը։ տօնախմբութեան նախընթաց օրը եկան հասան Եջմիածին նահանգապետ իշխ. Բէհրուդեանը, նահանգի զինուորական և քաղաքական աստիճանաւորները, Երևանի և շրջակայից հայ և թուրք պատւաւոր բնակիչները, Երևանի տաճկական շարիաթի անդամները և ուրիշ շատերը։

Այդ օրն էլ, այն է՝ փետրվարի 28-ին, 1837 թ., առանձին շքով և հանդիսաւորութեամբ Ս. Եջմիածնում բացուեց Սինոդը։

Եկող տարուայ օրսցոյցին, իբրև յաւելուած, կաշխատենք տալ Պօլօժենիկի ամբողջ թարգմանութիւնը։

3564
3565
3566
3567
3568
3569

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0495417

ՀՀ Ազգային գրադարան



NL0495412

ՀՀ Ազգային գրադարան



NL0495410

ՀՀ Ազգային գրադարան



NL0495408

ՀՀ Ազգային գրադարան



NL0495407

ՀՀ Ազգային գրադարան



NL0495406

